ԷԼԼԱԴԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԷԹՆՈՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ ԱՐՑԱԽԱՀԱՅ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ազգային դպրոցի նոր հայեցակարգը պետք է հիմնվի մեր ժողովրդի մշակույթի հարուստ պատմության, այդ թվում ժողովրդական բանահյուսության պատշաճ գնահատման վրա, այսինքն՝ պետք է ընդհանրացնի դարերի ընթացքում կուտակված կրթության ու դաստիարակության իմաստությունն ու փորձը, մանկավարժական ավանդույթներն ու արժեքները, այն ամեն լավագույնը, որ ստեղծել է հայ ժողովրդական մանկավարժությունը և միաժամանակ հաշվի առնի մեր կյանքի պահանջներն ու զարգացման միտումները: Ահա թե ինչու դաստիարակության ազգային հայեցակարգ ստեղծելիս պետք է մեծ նշանակություն տրվի նաև էթնոմանկավարժության ուսումնասիրման հիմնահարցին:

Գիտական մանկավարժության նորագույն ուղղություններից է էթնիկական մանկավարժությունը, որի հիմնական խնդիրներից մեկը հետևյալն է. «Ուսումնասիրել ժողովրդի մանկավարժական մշակույթը և գիտական մանկավարժության ոլորտ տեղափոխել այն մանկավարժական գիտելիքներն ու փորձը, որոնք մնայուն արժեք են ներկայացնում»:[1] Ներկա ժամանակներում մանկավարժական գիտության կարևորագույն նպատակներից է ուսումնասիրել ժողովրդի դաստիարակչական աշխատանքի դարավոր փորձը, գտնել դրա ռացիոնալ հատիկը կազմող առաջավոր գաղափարները և դրանցով հարստացնել մանկավարժության տեսությունն ու պրակտիկան: Հենվելով ժողովրդի մանկավարժական գործունեության բազմադարյան փորձի վրա՝ նոր խնդիրներ առաջադրել գիտական մանկավարժությունը: Մանկավարժական յուրաքանչյուր խնդիր ներկայացնելիս դպրոցականներին և թե բուհում ուսանողներին պատմել մեր ժողովրդական մանկավարժության մեջ առկա այն գաղափարներին մասին, որոնք վերաբերում են այդ խնդրին:

Հայտնի ճշմարտություն է, որ հազարամյակների ընթացքում մշակված դաստիարակության ժողովրդական միջոցների և ձևերի այդ համակարգը բացառիկ դեր ու նշանակություն է ունեցել մեր ժողովրդի համար՝ ազգային դիմագիծը ձևավորելու նպատակով:

[1] Ա. Նալչանջյան, Ս. Մկրտչյան, էթնիկական մանկավարժություն, «Զանգակ» հր., Երևան, 2003, էջ 17-18:

Հայ ժողովրդական բանահյուսությունն աշխարհի ամենահարուստ, հնագույն բանավոր ստեղծագործություններից մեկն է։ Ժողովրդական բանահյուսությունն այն արժեքներից է, որը սերտորեն կապված է հասարակական կյանքի, նրա զարգացման հետ, և իր բազմաբնույթ ժանրերով անցնելիք հարստություններով նպաստել և նպաստում է հասարակության դաստիարակությանը։ Անշուշտ, այսօր, հայ բանահյուսության (ֆոլկլորագիտության) առաջնահերթ խնդիրն է նաև տալ հասարակական կյանքի ու նրա հետ հանրաբաց քայլող հայ ժողովրդի բանահյուսության ամբողջական բնութագիրը։ Մինչդեռ, այժմ մենք չունենք արևմտահայ, արևելահայ հատվածների ժողովրդական բանահյուսության բոլոր ժանրերին ու ստեղծագործություններին նվիրված ամբողջական ուսումնասիրություն։ Այդ կապակցությամբ ուշագրավ է ակադեմիկոս ազգագրագետ Ստ. Լիսիցյանի ուսանելի այն դիտարկը, որ «Անհրաժեշտ է ժողովրդական բանահյուսությունը դարձնել լայն ուսումնասիրման առարկա, կարելի է հրաշալի հետազոտություն գրել ժողովրդական իրերի և ազգագրերի մասին»։[1]

Անհարկաց, այդ արժեքավոր մտքը իրատ կարևոր է նաև մեր օրերում ամենայն խորությամբ ու լայն ընդգրկմամբ, հրապարակի վրա եղած ուսումնասիրությունների օգտագործմամբ և բանահավաքությամբ ձեռքբերված նյութերի հիման վրա ձեռնամուխ լինել Հայոց Արևելյան կողմանց պատմական Արցախի ժողովրդական բանահյուսության, որտեղ արտացոլված էր հոմանկալաժության գաղափարների գիտական և ամբողջական ուսումնասիրությանը, որը մեծապես կնպաստեր հայ ժողովրդական մանկավարժության ամբողջական պատմությանը։

Ավելորդ չէր լինի թեկուզ և շատ համառոտակի մատնանշել արցախյան ժողովրդական բանահյուսության զարգացման շրջաններին հարիրված մեր երախտաշատ բանահավաքների, ազգագրագետների, պատմաբանների արժեքավոր հետազոտությունները, որոնք ևս ուղենիշ են եղել նաև մեզ համար։ Դրանցից հիշատակենք մի քանիսը։ Արցախյան բանահյուսության հավաքմամբ և գրառմամբ զբաղվել են Ֆ. Մելիքիշվիլին, Գ. Շերմազանը, Ս. Տեր-Հովհաննիսյանը, Ս. Բարխուդարյանը, Կ. Սեֆի-Հանեզարյանը (Տմբլայի հայրը), Ա. Գրիգորյանը, Լ. Հարությունյանը, Ա. Իսրայելյանը, Եր. Լալայանը և շատ ուրիշներ։ Բազմաբովանդակ հոդվածներ են տպագրվել անցյալի «Արարատ», «Արձագանք», «Մեղու Հայաստանի», «Պլրոց», «Հայկական աշխարհ», «Գոյն», «Աշակ» և մեր ժամանակի «Խորհրդային մանկավարժ», «Պատմաբանասիրական հանդես», «Լրաբեր հասարակական գիտությունների»

[1] Ստ. Լիսիցյան. Լեռնային Դարաբաղի հայերը (ազգագրական ակնարկ), Հայ ազգագրություն և բանահյուսություն, նյութեր և ուսումնասիրություններ, հ. 12, Ե., 1981, էջ 67։

ների», «Մանկավարժական միտք» և այլ պարբերականներում: Բացի այդ, վաստակաշատ գիտնական, բանահավաք Մարգարիտ Գրիգորյանն իր երկարամյա ուսումնասիրությունների արդյունքներն ընդհանրացրել է «Լեռնային Ղարաբաղի բանահյուսություն» (Երևան, 1971) ժողովածուում, որ աղբյուրագիտական հիմք է ծառայում այդ ոլորտը յուրաքանչյուր ուսումնասիրողների համար: Սակայն էթնոմանկավարժության գաղափարների արտացոլումն արցախահայ ժողովրդական բանահյուսության մեջ հիմնահարցն առ այսօր գիտամանկավարժական տեսանկյունով պատմաքննական վերլուծության չի ենթարկվել: Հարկ ենք համարում նաև նշել այն հանգամանքը, որ քննարկվող հիմնահարցը շատ տարողունակ է, և հնարավոր չէ մեկ-ամսագրային հոդվածում տալ բոլոր հիմնախնդիրների գիտամանկավարժական լուսաբանումը: Ուստի, մեր նպատակն է կատարած ուսումնասիրությունների հիման վրա ամբողջական պատկերացում տալ արցախահայ ժողովրդական բանահյուսության տարբեր ժանրերում ու ստեղծագործություններում արտացոլված էթնոմանկավարժության գաղափարների՝ բարոյական, հումանիստական, հայրենասիրական, աշխատանքային, քրիստոնեական, գեղագիտական և այլ բաղադրամասերի դաստիարակության՝ իր ժամանակի մոտեցումները, որոնցից շատ-շատերի մանկավարժական, արդիական արժեքը մեր օրերի համար անգնահատելի է:

Արցախի բազմադարյան հոգևոր հարստության ուշագրավ երևույթներից է հնագույն ժողովրդական հարուստ բանահյուսությունը: Արցախի ժողովրդական բանահյուսությունը եզակիորեն հարուստ է և եզակիորեն ընդգրկուն, քանզի այն ոչ թե պատմական Հայաստանի էթնիկական մի շրջանն է ներկայացնում, այլ Հայոց Արևելից կողմանց՝ Աղվանից ողջ հայաշխարհի՝ դարերով ստեղծված մտավոր արժեքի որոշակի խտացումը: Դարերի ոլորապտույտներում պարբերաբար այս երկիրը զրկվեց իր տոհմիկ բնակչությունից: Չնայած իրար հաջորդող ծանր քաղաքական պայմաններին, դարեր շարունակվող դաժան գոյամարտը չի խանգարել արցախահայերին արարելու իր հոգևոր մշակույթը: Պայքարելով իր ֆիզիկական գոյության պահպանման համար, իր գոյության ամենաօրհասական պահին անգամ չի կորցրել հոգու արիությունը և մտքի սլացքը՝ նա միշտ միջոցներ ու հնարներ է գտել մշակութային կյանքի ամենաբազմազան դրսևորումներում ստեղծել իր ինքնատիպ բանահյուսությունը, որում արտացոլվում են հայ ժողովրդի այդ հատվածի բնակլիմայական և աշխարհագրական պայմանները, սոցիալ-տնտեսական կյանքը, ազատագրական պայքարը, հասարակական-քաղաքական հարաբերությունները, հասունացող սերնդի կրթության ու դաստիարակության մի կուռ համակարգ իր հարուստ բովանդակությամբ:

Արցախյան բանահյուսության ինքնատիպ ու անգնահատելի գոհարներ՝ բազմաթիվ ասացվածքներ, առածներ, հեքիաթներ, երգիծական զրույցներ, առակներ և ժողովրդական հանճարի այլ ստեղծագործություններ իրենց բովանդակությամբ և ձևով արտահայտած կրթական և դաստիարակչական խնդիրներով խիստ բազմազան են: Նրանցում արտացոլվում է մարդկային կերպարների, գործող անձերի բարոյական հատկանիշներն ու հատկությունները, ֆիզիկական ուժը, մարդասիրությունը, հնարամտությունը և այլ որակներ: Բնորոշ է, որ բարոյականության հասարակական ընբռնումներն արցախյան բանահյուսության մեջ բխում են համամարդկային այնպիսի արժեքներից, ինչպիսիք են մարդասիրությունը, բարու արարչագործությունը, հայրենասիրությունը, ազնվությունը, աշխատասիրությունը, խաղաղասիրությունը և այլն: Ահա երկրամասի ժողովրդի բարոյական դավանանքի բազում արտահայտություններից միայն մեկ նմուշ, որը ժամանակի ընթացքում բյուրեղանալով՝ դարձել է ողջ հայ ժողովրդի բարոյական հավատամքը՝ ուղղված դարերին, սերունդներին. Ժառանգ թողե,

կամար կապե,

Սին կիր կյիրի

Սին ծառ տնգե,

Հավատդ էլ դային փռնե...

Հիրավի, բանաձևած այս պատգամները ամփոփում են ներդաշնակ ու համերաշխ կյանքի ընդունակ մարդկության հողեղեն երջանկության, նրա բարձրագույն բարոյախոսության ողջ բովանդակությունը:

Արցախյան բանահյուսության յուրաքանչյուր ստեղծագործության («Լուսնան մթեն աշխարքեն», «Վրեսկե թասը», «Դեվի առու կամ դեվ արդ», «Զրաբերդ», «Զոխտ խաչ» և այլն)[1] մեջ բարոյական դաստիարակության գաղափարները ներկայացված են հարուստ ներկապնակով, ինչպես գեղագիտական իդեալի, ժողովրդի երազանքների, այնպես էլ դրական կերպարների, բնավորության, վարքի, հոգեբանության, դրական և բացասական հատկությունների բնութագրմամբ ու արժեքավորմամբ և դաստիարակ-չական առումով կողմնորոշում են ընթերցողին ընդունելու կամ մերժելու այդ հատկությունները: Իր էությամբ լինելով մարդասեր, Արցախի ժողովուրդն իր պատմության տարբեր շրջաններում իր համերաշխությունը, սերն ու հարգանքը և բարեկամական զգացմունքներն է արտահայտել պանդուխտ օտարերկրացու, ազնիվ ու մարդկային օտար բարերարների նկատմամբ, հաշտ ու խաղաղ ապրել իր ավանդական հարևանների հետ՝ երախտագիտությամբ փոխհատուցելով նրանց

---

[1] **Մանրամասը տես, Մ. Գրիգորյան, Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. 5, Երևան, 1971, էջ 1971, էջ 101, Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը, Երևան, 1971, էջ 94-102:**

բարի գործերը և սերունդներին պատգամելով նույնակերպ վարվել («Թաքավըրեն ըխճըկան խոսկը» հեքիաթը, «Ռուսեն ախպոր» ավանդությունը և այլն):

Աշխատանքի պատկերացումը և աշխատանքային դաստիարակության հարցերը իրենց ուրույն տեղն ունեն Արցախի ժողովրդական բանահյուսության մեջ: Դարերի փորձով իմաստնացած արցախցին եկել է այն համոզման, որ ազնիվ ու ստեղծագործ աշխատանքը ստեղծում է ոչ միայն նյութական բարիքներ, այլև հոգեպես ազնվացնում է մարդուն, նրան օժտում մարդկային լավագույն հատկանիշներով, ուստի բազմաթիվ հեքիաթներում («Ըշխադածն անուշ ա ընում», «Անահիտին ախպուրը» և այլն) ավանդություններում, խաղիկներում այն գաղափարն է արտահայտվում, որ առանց աշխատանքի նկատմամբ սիրո և հարգանքի չի կարող լինել ճշմարիտ մարդկային բարոյականություն: Արցախյան բանահյուսության բոլոր ժանրերում կարմիր թելի պես անցնում է աշխատասիրության դաստիարակման գաղափարը: Դրա վառ օրինակներից են Շուշիին նվիրված խաղիկները, առած-ասացվածքները: Խաղիկներում հաճախ հանդիպում ենք հայ աղջկա հոգեվիճակի արտացոլմանը:

Ղալին հըղեն խոտալ ա,
եզինքը նստոտալ ա,
Հըես ա եկավ իմ յարը,
քյաքուլը թըզոտալ ա:[1]

Քնարական հերոսուհին այստեղ ընդգծում է տղայի սիրունությունը, շեշտելով նաև նրա աշխատասիրությունը:

Ինչպես տեսնում ենք, արցախյան բանահյուսության տարբեր ժանրի ստեղծագործությունները հիանալի միջոց են երիտասարդության մեջ ոչ միայն աշխատանքային ունակություններ, այլև սեր ու հարգանք, հետաքրքրություն դաստիարակելու տարբեր աշխատանքի նկատմամբ, համոզելու նրանց, որ մարդու կեցության գլխավոր պայմանն աշխատանքն է, և որ աշխատանքը պահանջում է որոշակի գիտելիքներ, ունակություններ, վարպետություն, որոնք և ապահովում են նրա արդյունավետությունը:

Արցախյան ժողովուրդն իր բազմաժանր բանահյուսությամբ հարուստ նյութ է տալիս նաև գեղագիտական դաստիարակության համար: Երկրամասի ժողովրդի գեղագիտական ընկալումները խորապես կապված են մի կողմից մարդու բարոյական կապերի, նրա ֆիզիկական ուժի աշխատանքային գործունեության, մյուս կողմից՝ բնապաշտպանական պատկերացումներին: Մարդն իր բնույթով արվեստագետ է: Նա ամենուր ձգտում է գեղեցկություն մտցնել իր կյանքում: Այդ պատճառով Արցախի ժողովուրդն իր բանահյուսության մեջ տարբեր միջոցներով ցուցադրում է բուն աշխատանքային գործըն-

[1] Տե՛ս, Մ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 22:

թացի ու նրա արդյունքների գեղեցկությունները, փորձում մարդկանց մեջ ձևավորել աշխատանքային գործունեության գեղագիտական բնույթի ըմբռնում, զարգացնել գեղագիտական վերաբերմունքը բնության, կյանքի հանդեպ: Արցախցու գեղագիտական իդեալը, որ մշակվել է դարերի ընթացքում, ոչ միայն գեղեցիկ արտաքինով, լայնաթիկունք, հզոր բազուկներով ու ճկուն մարմնով հողագործն ու մարտիկն է, բնաբույր հրապույրներով գեղջկուհին, այլև բարությամբ, ազնվությամբ, արդարամտությամբ օժտված աշխատասեր ու քաջ արցախցին, բարի ու գթասիրտ, բազմաշնորհ արցախուհին իր հայրենի աշխարհի բարձրաբերձ ու ծյունածածկ լեռներով, գահավիժող ջրվեժներով, ծաղկաբույր մարգագետիններով:

Մեր ուսումնասիրություններից հանգում ենք այն եզրակացության, որ գեղագիտական դաստիարակության հիմնական գաղափարները, միջոցները խորությամբ արտահայտված են բանահյուսության տարբեր ժանրերի ստեղծագործությունների սյուժեների, կերպարների, հեղինակային բնութագրումների, կառուցվածքային տարրերի, պատկերավորման և արտահայտչական միջոցների լեզվի և ոճի մեջ: Տարբեր ժանրերի ստեղծագործություններում բնության մեջ ու կյանքում հանդիպող գեղեցիկի վերաբերյալ սփռված դատողությունները, մտքերն ու գաղափարները, արտահայտված զգացմունքները, պատկերներն ու բնութագրումները, ժողովրդական մանկավարժության մեջ արտացոլված գեղագիտական դաստիարակության գոհարներից են, որոնց դերն ու նշանակությունը մեր օրերի համար դժվար է գերագնահատել:

Աներկբա կարելի է բնութագրել, որ գեղագիտական դաստիարակության հիմնական գաղափարները, միջոցները ամբողջությամբ արտահայտված են արցախյան բանահյուսության գեղարվեստական արժանիքների համակարգում:

Արցախյան բանահյուսության բոլոր ժանրերում բազմակողմանիորեն արտացոլված են նաև կրոնական դաստիարակության գաղափարները: Օրինապահ և հավատացյալ արցախցու սրտում միշտ վառ են մնացել կրոնական զգացմունքները, ավանդույթները ու սովորությունները, որով և նա դաստիարակել է իր սերունդներին՝ մաղթելով հավատալ ամենաբարձրյալի բարեգործությանը: Որպես դրա մի նմուշ, ընդգծենք՝

Ըսօր մընա համբարձում ա,
Աստըծուն փառքը բացվում ա,
Քրիստոսը երգյինք հըմբարցվեց
Լոխնիս բախտը պեցվըմ ա:[1]

---

[1] Մ. Գրիգորյան, Լեռնային Ղարաբաղի բանահյուսություն, Երևան, 1971, էջ 58,88:

Հայ ժողովուրդն ու նրա արցախյան հատվածը միշտ էլ Աստծու գաղափարի մեջ փորձել են հասկանալ կյանքի արարչագործության, հոգևոր-բարոյական արժեքների խորունկ իմաստը, դարեր անընդհատ ավետարանն օգտագործել են որպես բնության, կյանքի, մահկանացուի խորհուրդը մեկնաբանող, հոգևոր կատարելագործման ու բարոյական դաստիարակության անփոխարինելի մի աղբյուր: Հայ ժողովրդի դարավոր պատմությունը մեզ հիշեցնում է, որ հայ եկեղեցին ու կրոնը կատարել են մեր ժողովրդի ֆիզիկական գոյատևման ու հոգևոր-մշակութային ու ազգային այլ արժեքների պահպանման գործում անգնահատելի դերը և միշտ էլ հայ մարդը ակնածանքով ու սիրով է վերաբերվել իր առաքելական եկեղեցուն ու կրոնին, նրա լուսավոր ու անձնազոհ գործիչներին:

Այսպիսով, վերը համառոտ շարադրածից էլ կարելի է եզրակացնել, որ արցախյան բանահյուսությունը, ծնավորվելով դարերի ընթացքում և իր վրա կրելով սոցիալ-պատմական իրադարձությունների և ազգային հոգեբանության խոր դրոշմ, ձեռք է բերել ոչ միայն հարուստ ճանաչողական նշանակություն, իմաստուն կենսափիլիսոփայություն, այլև նրանցում արտացոլված շատ գաղափարներ հարստացրել են հայ դասական մանկավարժության գանձարանը, և դարեր անընդհատ կիրառվել հայ իրականության մեջ միանգամայն օգտակար ու պիտանի՝ հայոց նոր և հաջորդ սերունդների ազգային դաստիարակության համար:

Սույն ամսագրային հոդվածում թեկուզ և համառոտակի, քննության է առնված Արցախի ժողովրդական բանահյուսության մեջ արտացոլված էթնոմանկավարժության գաղափարները, անշուշտ, դրանով չի սպառվում հիմնահարցի գիտական մեկնաբանումը, այն պահանջ է առաջադրում մանրամասնորեն ուսումնասիրել և ամենայն խորությամբ գիտամանկավարժական տեսանկյունով լուսաբանել ու առաջադրել այն տեսակետներն ու մեթոդները, հիմնադրույթները, որոնք այսօր ընդունելի են գիտական մանկավարժության համար:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ա. Նալչանջյան, Ս. Մկրտչյան, էթնիկական մանկավարժություն, Երևան, «Զանգակ» հր., 2003:
2. Ստ. Լիսիցյան, Լեռնային Ղարաբաղի հայերը (ազգագրական ակնարկ), Հայ ազգագրություն և բանահյուսություն, նյութեր և ուսումնասիրություններ, հ. 12, Երևան, 1981:
3. Ս. Գրիգորյան, Հայ ժողովրդական հեքիաթներ, Երևան, 1971:
4. Ս. Գրիգորյան, Լեռնային Ղարաբաղի բանահյուսություն, Երևան, 1971:
5. Գ. Գրիգորյան, Հայ ժողովրդական բանահյուսություն, Երևան, 1980:
6. Վ. Հարությունյան, Ժողովրդական մանկավարժության հարցի շուրջ, «Սովետական մանկավարժ», Երևան, 1976, թ. 9:
7. Ա. Ղազինյան, Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 15, Երևան, 1983:
8. Ա. Ղանալանյան, Ժողովրդական բանահյուսության մի քանի հարցեր, Երևան, 1954: